

բիւր ընտանիքէ բաղկացած, հարիւր յիսուն տարիէ ի վեր հոն հաստատուած են, և Պալազիտի մօտ՝ Ալաշկերտ աւանէն գաղթած են: Հետեաբար անոնք ուրիշ բան չեն ըրած, բայց եթէ կրկին տիրապետել նոր երկրին, որովհետեւ հնուց ի վեր անիկայ Հայոց կը վերաբերէր:

Չուշայի չիրմաց նման բազմաթիւ գերեզմաններու աւերակներ կը վկայեն, թէ երբեմն բարգաւաճ վիճակ մ'ունեցեր է այդ գիւղն: Այն աւերակաց վրայ կու գան աղօթելու ներկայ բնակիչքն, և բոլոր Հայաստանի մէջ տարածուած ի՛նչ սովորութեան հսոնմատ՝ հոն փոքրիկ կանթեղներու մէջ նաւթ կը վառեն, և զգեստներու կտորներ կը ձգեն: Աւերակ մատրան մը մէջ, որ հոս Դրաղկանց մատոռա կը կոչուի, որմերու և սալալատալաց վրայ նոր թափուած արեան արատներ կը տեսնուին: Այս բանիս մասին կը պատմեն մեզ, թէ ամէն մարդ որ կու գայ հոս աղօթելու առ Աստուած և բժշկութիւն խնդրելու համար, հարկ է որ վառեակ մը կամ քսոնուկ մը մօրթէ մատրան մէջ:

Կէօլ-քէնտի բնակիչները մշակութեան և ձկնորսութեան կը պարապին: Այս միջոցիս, Կէօլ-չայի մէջ միայն տեսակ մը պերկէ ձուկ կը գտնուի:

Լիճը շրջապատող ճահիճներուն այս մասը ի է բազմաթիւ թռչուններով:

(Շարայաբէյի)

ՄԱՏԵՆԱԻՕՍԱԿԱՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻՆ

եհ

ԱՐԱՐԱՏ ԹԵՐԹԻՆ ՄԷԿ ՅԱԻԵԼՈՒԱԾԸ

— 32 —



ԱՆՐ Գրականական պատմութեան մէջ, Անանիա Երեւակցին իրեն յատուկ և բաւական պատուարբեր դիրք մի գրուեր է իւր մասնագիտութեամբ. այն է՝ աստղաբաշխական և մանաւանդ թուաբանական հմտութեամբը, որուն համար և՛ Համարող կոչումը ժառանգեր է իրեն: Սա ընդհանրապէս ի բանասիրաց եօթներորդ դարու հեղինակ կը համարուի, և կամ « ի սկզբան Է դարու, — ինչպէս կ'ըսէ Ք. Պատկանեան՝ Երեւակացոյ գրութեանց հրատարակութեան նախաբանին մէջ, — յաւուրս Վօրկայ և Աբրուէշ Խոսրօ, վու »: Սակայն ինձ շատ հաւանական չի թուիր այդ, որովհետեւ Անանիայի իւր անձին կամ կենացը վրայ տուած ուրիշ տեղեկութեանց հետ չի համաձայնիր. հետեաբար Փոկասէն վերջը և Հերակլեանց հարստութեան միջոց պէտք է դնել նորա գրականական կենսաբան (610—644): Վերոյիշեալ հրատարակութեան սկիզբը դրուած է գլուխ մի,

« Անանիայի Երեւակցանցայ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենացն » . արդ այս զլիտոյս մէջ՝ Երեւակցին իւր վարդապետին բերանը կը դնէ (էջ 2—3), թէ « Ես ի Տրապիզոն քաղաքի մանկութեամբ կացեալ ի դուռն Յովաննու զօրավարին զինուորեալ ի Հայս, և բազում ժամանակս կացեալ մինչև ի Վօրիկ թագաւորն և ուսայ լեզու և դպրութիւն »: Արդ, այդ Յովաննու զօրավարն պէտք է լինի Միստակոն (Μυστάκων) կոչուածն, որ՝ ըստ վկայութեան Թէոփիլակտոսի՝ Վօրիկ կայսեր առաջին տարին (582ին) կը թողու Հայոց զօրավարութիւնը, և կ'երթայ « լինել իշխան զօրացն արևելեայց Հռօմայեցոց »: Եւ ահա այդ ժամանակները (580—582), Տիւքիկոս — Երեւակացոյն վարդապետն — գեռ. «մանուկ»

4. Theophylactus Simocatta, (Corpus Scriptorum historiae Byzantinae), Bonnæ, 1837. p. 49.

կըսուի, Թերևս 15-20ամեայ պատանի, որ ապա պատերազմի մէջ մտնելով « ի յարձակման զօրաց Պարսից ի վերայ Յունաց, վիրաւորեալ ի պատերազմի, փախստեայ յԱնտիոք », և այլն (Հարկ. Պտկն. 3 էջ)։ Այդ Յունաց և Պարսից մէջ եղած պատերազմը չհաւանականաբար պէտք է դնել Պարսից Արմիդէ Դի ժամանակ, որուն տասնամեայ Թագաւորութեան միջոց (579-589 կամ 590) անընդհատ պատերազմ և գծտութիւն էր երկու սահմանակից տէրութեանց մէջ, ըստ Նէոդէքէի¹։ Եւ ահա Տիւքիկոս, յետ առողջանալու իւր վերքերէն, կ'երթայ յԵրուսաղէմ, յԱղեքսանդրիա, ի Հռոմ, ուր բաւական ժամանակ կը կենայ. ապա կ'Պոլիս դառնալով՝ ուսմանց վարժապետ մի կը փնտռէ իրեն, զոր կը գտնէ Աթէնքի մէջ, « աթր երեւի » կ'ըսէ, որուն քով շատ տարի կ'աշակերտի։ Եւ յիրաւի, բոլոր կիսանքը դիւնորութեան մէջ անցուցած և մեծաճատակ մարդ մի, — զի այն ժամանակ առ սակաւն երեսնամեայ պէտք էր լինել Տիւքիկոս, — այնչափ գիտութիւններ ունաներու, և « կաւ տարեայ իմաստութեամբ » դառնալու, և յետոյ այլոց ևս վարդապետելու և ուսուցանելու համար, հարկ չէր որ շատ տարիներ աշխատած և աշակերտած լինէր Աթէնքի և Բիւզանդոնի վարժարանաց մէջ։ Այսու այն երբակացութեան կը հասնինք, Թէ Տիւքիկոս՝ Տրապիզոնի վարժարանին մէջ վարդապետել սկսելու միջոց՝ հարկ էր լինել առ նուազն քառասնամեայ, որ ըսել է՝ Բիւզանդոնի Փոկաս կայսեր ժամանակները (602-610 Թուականին)։ Բայց այդ ժամանակէն տարիներ յետոյ, — զի բաւական ժամանակի կարօտ էր Տիւքիկոսի համբաւը մինչև հեռաւոր տեղեր տարածուելու համար, — մեր պատանին Անանիա Երիրակացին կ'երթայ աշակերտելու իրեն (Հաւանականաբար յամս 610-615), որուն քով ութ տարի կենալով, « ուսանի լիով զարուեստ համարութեան » — ըստ անձին վկայութեան, — և կը դառնայ ի Հայքներս։ Այս բոլոր անձանց և Թուականաց համեմատութիւններէն կրնանք հետևցնել այն, Թէ Երիրակացին մեծաւորապէս ծնած պէտք է լինի 595-605 տարիներուն մէջ, ուստի և Մորիկ կայսեր վերջին տարիները և կամ Փոկասու կայսերութեան սկիզբները։ Այսչափ ենթադրութեանց գիմելու հարկ չէր լինել, եթէ Երիրակացին՝ որ իւր կենսագրութեան մէջ այնչափ աւել-

լորդ մանրամասնութեանց իջեր է՝ ճշդիւ նշանակած լինէր գէթ իւր ծննդեան տարին, նա՞ որ ի մանկութենէ իրեն զուարճութիւն և գլխաւոր պարապումն ըրեր էր համարողութիւնը և տոմարագիտութիւնը. բայց այդու ևս պէտք է զոհանալ։

Մամանկ շատ միջին և քննութեան կարօտ կէտ մ'է և այն, Թէ այդ « Տիւքիկոս վարդապետն Բիւզանդիոյ » կոչումով անձը, այնչափ համբաւեալ՝ մինչ զի Բիւզանդոնէն անգամ իրեն ոտը կ'երթան աշակերտելու, այնչափի հմտութեամբ լի՝ որ գրեթէ առաւ պելական կը թուի՝ մանաւանդ այն ժամանակաց համար, « գիտակ հայերէն դպրութեան և երևելի Թագաւորաց », որուն մօտ այնչափ գրեանք կը գտնուէին, « զադոնք և յայտնիք, (եկեղեցականք և արտաքինք), արուեստականք և պատմագիրք, բժշկականք և ժամանակագիրք », և այլն, — կ'ենթադրուի՝ բոլորն այլ Երիրակացոյն վկայութեան վրայ հիմնուած, — Խնչպէս կարելի է՝ որ ոչ մէկ յետագայ հեղինակ կամ պատմագիր և կամ ժամանակագիր չեն յիշեր զինքը, և գրեթէ ի սպառ անձնութիւնացն էր արդի բանասիրաց ևս։ Այլ. Փարթիկոսի Յունական Մատենադարանին¹ մէջ կը գտնուին առնուաճ բազմաթիւ աստղաբաշխից, որոնց աշխատութիւնք կամ Հրատարակուած չեն և կամ կ'որոտուր են, և ասկայն բնաւ չի յիշուիր նոցա մէջ Տիւքիկոս Բիւզանդացի։ Ըստ վկայութեան հմուտ բանասիրաց, Զ-է դարն յունական գիտութեանց համար ամենէն աւելի մտով ժամանակն է, և նոյն դարու մէջ եղած սակաւ գիտնոց անուանք միայն ծանօթ են մեզ. և եթէ այդպիսի անձ մի գոյութիւն ունեցած լինէր, կարելի՞ էր որ ամենուն միանգամայն ուշադրութենէն վրիպած լինէր։

Արդ, որովհետև Անանիայի անունն շատ սերտ կապով միացած է Տիւքիկոսի անունին հետ, այն պատճառաւ շատ տարակոյսներ և խնդիրներ կը ծագեն նաև Երիրակացոյ մինչև ի Բիւզանդոնի կամ Տրապիզոն ըրած ուղևորութեան մասին. ինչպէս որ բնականաբար տարակոյսներ կը յուզեն ընթերցողի մաքին մէջ ուրիշ շատ մանրամասնութիւնք, որոց մեծ կարևորութիւն տալով կը յիշատակէ հեղինակն իւր կենսագրութեան մէջ։ Որքանակ իմն. Երիրակացին մինչև կ'Պոլիս կ'երթայ, անցնելով անշուշտ Տրապիզոնէն, և չիմանար բնաւ Տիւքիկոսի հոն գտնուիլը. ապա կ'Պոլսոյ մէջ ժամօրից (ոյք էին արդեօք դոքա)

1. Պատմ. Ստանդարտ Գիտութեան, Թրգա. Ն. Քա. բաժանի. Արաստ, Ա. Յուն. 1896, էջ 30.

1. Jo. Alberti Fabricii, Bibliotheca Græca, lib. III. p. 509-518, Hamburgi, 1716.

կը հանգիւի, որոնք կու տան իրեն այդ տեղե-
կութիւնը. անտի ետ կը դառնայ ի Տրապի-
զոն, և այն տեղ կը գտնէ զՏիւրքիկոս — ինչ
վերաբերութիւն ունի — Ս. Էլզինեայ վկա-
յարանին մէջ Գետոյ դարձեալ, մի և նոյն
վկայարանին մէջ (Ս. Էլզինեայ), տեսիլ կամ
երազ կը տեսնէ՝ Հաւաստելու համար թէ չկան
հակոտնեայք կամ ընդդիմադրողք (Հրատ.
Պտկն. էջ 39-40). դարձեալ, անբացատրելի է
իրեն վարդապետին արտաբոյ կարգի հմուտ-
թիւնն և համբաւն, ինչպէս ըսինք, մինչ զի
« գային առ նա յուսմամբ յամենայն աշ-
խարհաց առ ծովածաւալ գիտութիւն », և
նորա բողոքովին անծանօթ մնալ, և այլն՝
Բաց աստի, եթէ ուզենք մտադիր ակն-
արկ մի ևս ձգել իրեն ընծայուած գրու-
թեանց վրայ, պիտի տեսնենք որ դոքա՝ կամ
երկրայականք են, ինչպէս է, ըստ իս, ի Գայտ-
նոսթիմ Տեառն և փրկիլիմ մեղոյ ճառն (Հրատ.
Պտկն. յէջ 4-15), որուն վրայ թերեւս ու-

րիշ անգամ առիթ ունենամ խօսելու. —
կամ յայտնի Թարգմանութիւնք են, ինչպէս
են, « Կենդանատեսակաց մեկնութիւնք կամ
տեղեկութիւնք » ի Պողոսէ Աղեքսանդրացւոյ՝
(Հրատ. Պտկն. յէջ 62-75). « Յաղագս կը-
ռոց և չափոց », որ ընդհանրապէս Ս. Եպի-
փանու Հետևողութեամբ գրուած է, ինչպէս
կը վկայէ Կեն. Հեղինակն Պատմ. հայ գր-
պրոսթեան՝. — և կամ ժողովածոյք յայլ-
և այլ մատենագրաց, և յատկապէս Ս. Բարսիլի
Վեցորեայ հաճեալն, ինչպէս է ընդհանրա-
պէս Աստղագիտութիւն կամ Գաղապս երկնի
կոչուածը:

Այս մէկին ըսածիս ի հաստատութիւն
կ'ուզեմ վեր կերպով օրինակ մէջ բերել, յորս
պիտի տեսնուի թէ ինչպէս Ան. Շիրակացին
իւր առջև ունեցեր է Ս. Բարսիլի Հայերէն
Թարգմանութիւնը, և գրեթէ առանց ամե-
նախնի փոփոխելու շարադրութիւնը և բառե-
րու կարգն անգամ, օրինակեր է անտի.

Ս. Բարսիլի (Ճառ Զ. 130-131 էջ)

Եւ յայսմ ամենայնէ յայտ է, թէ մեծ է
արեգակն ըստ վկայութեան գրողն՝ որ եղև ի
վերայ նորա... և յայսմ օրինակն ի միտ ան՝
զիկն չափ է մեծութեան նորա. տես որչափ
բազմութիւն աստեղաց են յերկինս, և ընդ
ամենեւեան ոչ են բաւական լուսաւորել զար-
իւուր տրամութիւն գիշերւոյն, և արեգակն
միայն միով անձամբ, յորժամ երևի և Խարա-
ծեացէ ի վերայ օդոյ զլոյսն), զամենայն սահ-
ման աշխարհիս միտնկամայն լուսաւորէ...
Նա և մինչ չև երևեալ (և ընդ երկիր ծաւա-
լեալ իցէ) քաղցրահայեաց ճառագայթիւն
ցրուէ մաշէ զխաւարն, և Հեռակորոյս աննէ
զաղմամուլն, բառնայ զոխուրն տրամութիւն,
և ի տարածեալ մեծապայծառ լուսոյն ծածկէ
զլուսաւորութիւն աստեղաց. և զժամաձրամած
օդոյն զտուտերն մերկանայ յերեսաց երկրէ...
Եւ ընդ նմին օգ. քաղցրաշունչ շնչէ ընդ առա-
ւաս յաշխարհի, և ընդ արևաւորայ լուսաւոր-
րին՝ արկանէ ցօղ մանրացօղ ի ժամանակս ա-
մարայնոյ ընդ ամենայն երես երկրի. և Եւ ուս-
տի կարող է լուսաւորայ այս զանափ մեծու-
թիւն երկրի միովն երևելով յանկարծածին
ժամոյն լուսաւորել, թէ ոչ զի ի բարձրացեալ
բարձանցն՝ որ ունի զմեծաարած բոլորն բոլո-
րակ, զանապա ճառագայթման լուսոյ արձակեր:

Անահիտ Շիրակացի (էջ 60)

Եւ յայսմ ամենայնէ յայտ է թէ մեծ է ա-
րեգակն, ըստ աստուածային գրող վկայու-
թեան... և դարձեալ, յայսմ օրինակն ի միտ
ան զանբաւ մեծութիւն արեգակն, տես որ-
չափ բազմութիւն աստեղաց են յերկինս, և
ընդ ամենեւեան ոչ են բաւական լուսաւորել
զմութիւն գիշերւոյն. և արեգակն միայն մեծով
անձամբ յորժամ երևիցի՝ զամենայն սահման
աշխարհի լուսաւորէ:

Նա և մինչ չև երևալ իսկ՝ քաղցրահայեաց ճա-
ռագայթիւն ցրուէ մաշէ զխաւարն, և Հե-
ռակորոյս աննէ զաղմամուլն, բառնայ զոխու-
թիւն. և ի տարածանէ մեծապայծառ լուսոյն՝
ծածկէ զլուսաւորութիւն աստեղաց, և զժամ-
աձրամած օդոյս աստեղն մերկանայ յերկրէ:

Եւ ընդ նմին օգ. քաղցրաշունչ շնչէ յերկրի, և
ընդ արևաւորայն լուսաւորին արկանէ ցօղ ման-
րացօղ ի ժամանակս ամարայնոյ ընդ ամենայն
երես երկրի... Բնովն երևելով յանկարծա-
ծին ժամու լուսաւորել, թէ ոչ զի անչափ
մեծութիւնման յանբաւ բարձրութիւնն զան-
չափ ճառագայթս լուսոյն արձակեր:

1. Ս. Գ. Կ. Կ. Բուսթանի և աստղագիտի միջ, որ
գրեց Եփեսոսեանի թուականին 94 տարւոյն Մե-
սիք ամսոյն 20ին, որ է՝ Փրիստապի 378 թուականին.
որք քոջ խորագիրն է՝ « Εισαγωγή εις την άποτα-
λσοματικόν » S. 500-504, Alh. Fabricii, ուր կը խոսուի սոյն քոջ աղագրու-
թեան մասի, և մէջ կը բերուի ներկայիս Նիքիոսի,
ինչպէս կը կոչէ զայն Եփեսոսացիս Այս տեղ անա-
յայտնի կը լինի Եփեսոսացւոյ լեզուի անշարժութիւն,

անտէ և անխնայ խրճատութիւնն՝ յուսնէ նեա
աստիկ կաշմարտուած լինելուն պատճառաւ:

2. Պատմ. հայ գրութեան, էջ 443, աղագր. ի վե-
նետիկ, 1886.

3. Ս. Բարսիլի հաւք վասն Վեցորեայ արարչութեան.
Վենետիկ, 1830.

4. Գայտ. էջ 62 այս տեղ սող մի կը պահուի, զոր
կը տեսնենք Ս. Բարսիլի մէջ, առանց որոյ իմաստ
հասկանալի չէ:

Այս փորձիկ հատուածն անգամ բաւական է ցուցնելու համար, թէ որչափ ծառայական է բառական է Շիրակացւոյն հետեւողութիւնն, մինչ կարողի է միայն թերին միւ-

սով լրացնել և միայն վերականգնել միւսով ուղղագրել: զայս հաստատելու համար ուրիշ հատուած մ'այլ մէջ բերենք:

Ս. Բարսեղ (Ճառ Զ. էջ 433)

Եւ գնացք իմն են, ասեն, յաշխարհին Եւրոպացւոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն զյաւերուածս լիութեան իւրեանց, և երբեմն զիջանէ ի լիութեանն անտի. և այն, ասեն, ըստ գնացել լուսնին փոփոխուի: Ի սկիզբն ծնըլ գեան լուսնին անարժ կան, ասեն, գնացք իստ, զացիցն, և ըստ յաւերուին և ըստ աճէն լուսնի՝ սկսանի գեաւ և շարժիլ: Եւ յայնմ ծնվու՝ որ անուանեալն կոչի Երեկորեանց, նմա, նութիւն սրուակաց և՛ ասեն՝ ի միջի, իբրև եթէ՛ փոքն և ծծեն, կալ մալ ի պակասուլ թեան՝ ընդ պակասելն լուսնի, և իբրև թէ՛ բոխելով բոխնալ Երանալ Երանել փորելով ըզ. Զուրն՝ զի ընդ ընդ լուսնին յորդեացին:

Թերևս հետաքրքրական լինի բանասիրաց համար՝ իրարու դիմաց դնելով համեմատել հետեւեալ երկու կտորները, յորս անկյալտնի

ԱԼ. Շիրակացի (էջ 52)

Եւ գնացք իմն են ասեն յերկրին Եւրոպացւոց յովկիանոս, որ երբեմն ցուցանէ զյաւերուած լիութեան, և երբեմն զիջանին ի լիութեանն անտի, և այս ասեն ըստ գնացել լուսնի փոփոխի: Իսկ սկիզբն ծննդեանն լուսնի անշարժական ասեն գնաց իստ, զացիցն, և յաճելն լուսնի՝ սկսանին շարժել և գեաւալ: Եւ գար. ձեալ յայնմ ծովու՝ որ անուանեալ կոչի Երեկորեայ՝ նմանութիւն սրուակաց և ասեն ի միջին, իբր թէ՛ փոքն և ծծեն, խնարհին և պակասին ընդ պակասելն լուսնի, և բոխն, յորդեան և վերանան ընդ ընդ լուսնի:

Կ'երևի, մանաւանդ յառուկ անուանց մէջ, թէ որչափ խանգարումներ մուտ գտեր են երկու գրոց զրազրաց մէջ ևս:

Ս. Բարսեղ (Ճառ Դ. 74-75)

Զայս ասացուք, եթէ ժողովք Զուրն՝ որ կոչեցան ծովք, նորուն ծովու խորք և գոգք են, որ են յամենայն կողմանս երկրի, և իւրաքանչիւր խորքն ունին առանձին զկերպարանն, և զնշանն կոչեաց Աստուած ծովս: Քանզի են իսկ այնպէս, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ հարաւոյ, եթէ ծովն արևելից և ծովն արևմտից, և անուանս ևս ունին իւրաքանչիւր գոգն քաղու՝ ծովուց: Զի մին անուանեալ կոչի Պոնդոս Եւրասիոս, և միւսն Պրովանտիոս և Հելլեսպոնտիոս. և միւսն Էգէոս և Ունէն. նոս 2, և միւս ծովն Սարգոնիկէ 3 աշխարհի, և միւսն Սիկիլիա աշխարհին. գարձ է քաղու՝ ևս այլ անուամբք: Թէպէտ և աղի և դառն ձառակ ունիցին, և աւաղով սաշմանեալք գտաւ նիցին ըստ օրինակի կերպարանաց մեծին ծովու, սակայն չէ նա՛ր թէ ի կերպարանս մեծի ծովուն կայցեն, ոչ Ասփաղղոսէ 5 ծովակ՝ որ մտա է յաշխարհն Հրէաստանի, և ոչ Սերբու. նիսէս ծովակ՝ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պա-

ԱԼ. Շիրակացի (էջ 44)

Զժողովս Զուրն կոչեաց ծովս. և ահա յայս է թէ որոշեալ սաշմանօք Ենդոյ զխորշս գոգոցն որ են յամենայն կողմանս երկրի. և ունին իւրաքանչիւր խորքն առանձին կերպարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արևելից, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ ծովն արևմտից, և անուանս ունին իւրաքանչիւր գոգն քաղու՝ ծովուց: Զի մին անուանեալ կոչի Պոնտոս և Եգէոս, և միւսն Պրովանտոս և Հելլեսպոնտոս, և միւսն Էգէոս և Պոնտոս, և միւս ծովն Սարգոնիկէ աշխարհի, և միւսն Սիկիլիայ աշխարհին, և միւսն ի Տիւրքոսի 7, հանգերձ այլ ևս քաղու՝ անուամբք: Թէպէտ և զաղի ձառակ ունիցին, և աւաղով սաշմանեալ գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծաց ծովուցն, սակայն ոչ է պարտ զծովական ծովս կոչել: ոչ զԱսփաղղոս ծովակ՝ որ մտա յաշխարհն Հրէաստանի, և ոչ զՍերբինդիս 8 ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ ի միջի, և զայս հասանէ յաշխարհն Արաքսացւոց: Թէպէտ

1. Եգէոս ծովն է:
2. Յունական ծովն է. Շիրակացւոյն գրածն Եգէոս՝ ուղղագրուի է, յն. Ἰόνιος (πόντος).
3. Սարգոն կամ Սարգենիս կոչին է. այնն ունի ի Վիցոս. Բարսեղ. Տարծուն՝ թէլապոց.
4. Զարգիլ էպտոք է ուղղագրուի, ինչպէս ունի Շիրակացւոյն ընթերցումը:
5. Ասփաղղոս ծովակ. յն. Ἀσφαλτὸς λίμνη, նշան է Աղաթի կամ Մեծեալ ծովուն նշան:

6. Աւերոք է այդ էն:
7. Հարկ է ուղղել ըստ յունի՝ Տիւրքոսի 7 (Τυρρητικὸν πέλαγος). այլ Բարսեղ նա թարգմանաւ թեան մէջ ի սպում զեղուած է այդ անունն. եւսաւ նախն է թէ Շիրակացւոյն ունեցած օրինակին մէջ կայր, այլ վերականգնա Տիւրքիս կամ Տիւրքոս:
8. Քան զայդ աւելի ուղղագրուի է Բարսեղին. Տարծունց լիմնի, Սերբինդիս ծովակ:

դեստինէ աշխարհ ի միջի, և քաջ հասանէ մինչև ի կողմանս Արարացւոց:..., Թէպէտ և ասան ու մանք զծովէն՝ որ անուանեալ կոչի Հիւրկանայ, և զնորուն ընկերէն՝ որ անուանեալ կոչի Կասպիս 1. և այլն:

Սոյն կրկին հատուածոց հետ համեմատենք Ս. Բարսղի բնագիրը, յոյնէն բառ առ բառ թարգմանելով զայն. թէ և աստ, բա-

և ասան ամանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիս, և զնորուն ընկերէ որ կոչի Ասպիս 2, և այլն:

րեքախդարաբ, բաւական համաձայնք են իւրերաց հայն և յոյնն:

Եւ զԺողովս ջուրցն, զխորչս ասեմ՝ ըստ իւրաքանչիւր կերպարանաց ընդդոգեալս երկրաւ շուրջանակի, կոչեաց Արտուած ծովս: Ծով հիւսիսոյ, ծով հարաւոյ, ծով արևելից և միւս այլ աւրամից: Եւ և առանձին անուանք իւրաքանչիւր ծովուց. Եւքսինեան ծով, Պրոպոնտիս, Հելլէպոնտոս, Եգէան, Յոնիական, Սարգոնեան ծով, Սիկէրեան և միւս ևս Տիւրքեան ծով, և այլ անթիւ անուանք են ծովուց:... Սակայն ոչ որ զնոսա ըստ պատշաճի ծովս անուանեսցէ, թէ և կէսքն՝ ըստ օրինակի մեծի ծովուն՝ ունիցին ճաղակս ապիս և իցեն օսհմանեալք աւազով, որպիսի է Ափալաեան ծովակն ի Հրէաստանի, և Սերրոնիտէս՝ որ է ընդ Էջփալոս և ընդ Պաղատին աշխարհ ի միջի, ձգեալ ընդ անապատն Արաբիոյ:... Թէպէտ և ոմանք զՀիւրկանիս և զԿասպիս ծովս՝ արեցեն զստեալս օսհմանիս, և այլն:

Չանց կ'ընեմ դարձեալ համեմատել Կեցորէից և Շիրակացւոյն միւս յար և նման կտորները, ինչպէս են Ս. Բարսղի 112-116 էջերը՝ Անանիայի 49-56 էջերուն հետ, յորս լուսնի և արեգական վրայ կը թօսուի. — Ս. Բարսղի 124-126, 127-129, 130, 131, 133, 135 էջերը, որք կը համապատասխանեն՝ թէ և փոքր ինչ աստ անդ ցրուած՝ Շիրակացւոյ 49-54, 56-60 էջերուն. — Ս. Բարսղի 73 էջը՝ ուր կը սկսի, « Ձիցէ՝ տեսեալ ձեր զկատսայս և զսանս լի լրով եռացուցեայս ի հրատի, և այլն » մինչև 80 էջ « յորժամ պակասիցէ ի ծովու », կը համապատասխանէ Շիրակացւոյ 42 էջին՝ ուր կը սկսի, « Եւ օրինակ տան զկատսայս և զսանս լի լրով եռացուցեայ ի հրատի, և այլն », մինչև « յորժամ նուազի ի ծովու » բառերը: Միտ ղենլու է դարձեալ, թէ յէջ 36-37 (Շիրակացւոյն), ուր նոյնպէս Ս. Բարսղի իմաստները բառ առ բառ օրինակուած են՝ բայց հազիւ 10-15 տող (հմմտ. Վեցօրեայ, Ճառ Գ. էջ 60), երեք անգամ կը յիշուի Բարսղի անունն՝ իբր իրմէ վկայութիւն բերուած. մինչ ուրիշ տեղեր, ուր արտոյլ էջերով է օրինակութիւն կամ հետևողութիւն, ոչ միայն ակնարկ մ'անգամ չի կայ՝ այլ և փորձես ջանք մի կը տեսնուի հեղինակին կողմանէ ցոյց տալու թէ ինքնագիր է. ինչպէս որ, օրինակ իմն, յէջ 41 (Շիրակացւոյն)՝ ծովերու վրայ խօսելով, հեղինակն յանկարծ Ս. Բարսղի խօսքը կ'ընդհատէ և իրմէ նոր տեղեկութիւն մի կը յաւելու. Եւ ոչ մերաշխարհիս ժովակս՝ որ կոյնեք թգնոննաց և

այլն, ուր լեզուն և շարագրութիւնն կը մատնեն զրոգ անձը և ժամանակը. — Այս ամէնը՝ թէ և նպատակէս զուրս էր, բայց որովհետեւ կարեւոր էր ի հաստատութիւն յետագայ ընկիւններուս, այն պատճառաւ ստիպուեցայ մէջ բերել: Անցնինք արդ մեր բուն գլխաւոր նիւթոյն:

* *

Ներկայ տարւոյս Արարատ ամսաթերթի փետրուարի յաւելումին մէջ յօդուած մի կայր, Սեանիա Շիրակացի վերնագրով և Գալուստ Տ. Միլիտեան օտորագրութեամբ: Բ. Յօդուածագրի նպատակն է, ինչպէս կը ծանուցանէ նա ինքն, « Արարատի յաւելումն այն գրուածքները և պատասխանները, որոնք չեն մտել Պատկանեան հրատարակութեան մէջ » (էջ 96): Այս անգամուսն հրատարակութեան համար ընտրեր է Գալուստ անդոց և նշանաց փոքրիկ գրութիւնը, զոր գտեր է մի հնագոյն ժողովածոյի մէջ, որ « Գեորգ կաթողիկոսի ցուցակի » մէջ 102 թիւը կը կրէ: Արդ, այդ փոքրիկ և հետաքննելի երկասիրութեան սկիզբը թերի լինելով, չի գիտացուիր թէ որո՞ւ հեղինակութիւն է արդեօք: Սակայն Բ. Հրատարակչին կ'ուզէ հաստատել այդ յօդուածով, թէ « Շիրակացւոյ գրքին է պատկանում », առ որ երեք գլխաւոր փաստեր կը բերէ, զորս քննենք մի առ մի. ա. Այն հանգամանքէն, որ այդ գրութիւնը ձեռագրին մէջ « Անանիայի գրուածքներին

1. Բառ յունիս պէտք է լինի Կասպիս. հաւանական է թէ նեոպոլիսն ալ դրեք կարգացուիք է Թ:

2. Ուղղելի է ըստ Բարսղեան ամսն:
3. Ուղղելի է կաթոլի կամ կաթոլիս:

քաղուած Հատուածների շարքումն է, սկզբից թերատ՝ բայց վերջից անմիջապէս կից Անանիայի ճառերին » (էջ 97), կը հետևեցուն՝ թէ Երակացւոյն կը պատկանի այն, և զայս հաշտեալկան ապացոյց կը համարի Յ. Յօդուածագիրն։— Սակայն այդ հանգաւմանը, ըստ իմքեան, կը կորսնցնեն իւր հաշտեալկան ապացոյց լինելու իրաւունքը, քանի որ ձեռագրաց մէջ յաճախ կը պատահէինք, որ՝ այլեայլ մեղի ծանօթ հեղինակաց գրութիւնք իրարու կից կը գտնուին, մանաւանդ ճառական գրուածք, աւանց յիշատակութեան հեղինակներուն անուանց և սակայն այնու չնչը չփոթեր մէջ հեղինակին գրութիւնը միւսոյն հետ։ Մեր այս դէպքին մէջ, կարելի է թէ գրչագիրն ուզեր է մի և նոյն նիւթոց վրայ ճառող այլեայլ հեղինակաց գրութեանց հաւաքում մ'ընել. և ո՞վ կարող է դրական փաստերով ասոր հակառակը ցուցնել։ — Ենթադրութիւն մի ուրիշ ենթադրութեամբ կարելի է լրել։

Գ. Այդ բանին երկորդ ապացոյց կը համարի « գրութեան նիւթը և լեզուն » և փասն զի « շատ տեղ, կը յաւելուի Յ. Յօդուածագիրն, նոյն իմաստները գրեթէ մի և նոյն բառերով կրկնուում են այս գրուածքի և Երակակնու ծանօթ երկասիրութեանց մէջ » (էջ 87)։ — Սակայն, կարծեմ, գրութեան մի նիւթը բաւական ապացոյց չէ՝ որով կարելի լինի հաստատել՝ թէ մի և նոյն նիւթի վրայ ճառող գրութիւնք մի և նոյն հեղինակին լինին, մանաւանդ թէ անոր հակառակը. վասն զի ինչ հարկ կայր, մանաւանդ թէ աւելորդ չէր լիներ, եթէ մի և նոյն հեղինակն տարբեր տեղեր մի և նոյն նիւթին վրայ խօսէր, և այն ևս գրեթէ բառ առ բառ։ Այլ

թերեւս այնչափ միայն կարենանք ըսել, այդ դիպուածին մէջ, — մանաւանդ երբ գրութեանց մէջ նիւթոյն հետ միասին՝ լեզուի այլ նոյնութիւն գտնենք, — թէ մին օգտուեր է՝ փոխառութիւն կամ բնաբաղումութիւն ըրեր է ի միւսոյն, և ո՛չ այլ ինչ. ինչպէս կարծեմ բաւական կը հաստատէ զայս Ս. Բարսեղի Վեցորէից ճառերուն և Երակացւոյ ընծայուած գրքին մէջ եղած նիւթոց, իմաստից և լեզուի նոյնութիւնը. որուն մէջ երկու օրինակ բերինք այն յօդուածիս առաջին մասին մէջ։ — Եւ յիշուի, Յ. Բանասէրն ևս կասածելով ուրիշ վերոյիշեալ կրկին խախտ փաստերու արժէքին կամ հաւանակաւորութեան վրայ, մէջ կը բերէ երրորդ զօրաւոր փաստ մ'այլ իւր չէնք ի սպառ... տապալելու համար։

Գ. « Բայց վերջնական և աւելի դրական ապացոյց այս գրութեան Երակացւոյն լինելուն գտնում ես, կ'ըսէ նա, նոյն հեղինակի գլխավոր երկասիրութեան (Յաղագս երկնի, Հրտ. Պատկ - եր. 54) մէջ » և ապա մէջ կը բերէ Երակացւոյն խօսքերը. յորս լուսնի վրայ խօսելով կրկին անգամ կը գործածէ նա նշանք բառը. « Յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ի լուսաւորացք » և « գտունեն ի նշանաց անտի » և այլն։ Ապա ուրեմն, կը հետևեցունէ նա, Երակացին այդ խօսքերով կ'անհարկէր իւր Յաղագս անկող և նշանաց գրութիւնը։ — Բայց խնդրեմ, Յ. Բանասէր, հասեցէք բանալ Ս. Բարսեղի Վեցորեայն (Հրտ. Վենետիկ, 1830, էջ 144), և պիտի համոզուիք թէ Երակացւոյն այդ խօսքերը որչափ արժէք... չունին, երբ տեսնէք թէ Ս. Բարսեղ է զոցա հեղինակն՝ և ո՛չ Անանիա։

Ս. Բարսեղ

Եւ դարձեալ ասէ, եթէ « Եղիշին ի նշանակս Ժամանակս և յաւուրս և ի տարեկանս »։ Յոյժ պատշաճ և պիտոյ են աշխարհի և մարդկան նշանք՝ որ լինին ի լուսաւորացք, եթէ որ ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ օտարոտի քըն նուծեամբ։ Չի որ միտ եդեալ ընտրիցէ զգեղեցիկ փորձն նոցա, յորժամ չխառնիցէ ի ներքս զամբարշտութիւն ազգի ազգի հնարս օգտութեան գտանէ ի նշանաց անտի։ Չի վասն խոնաւոյ ժամանակաց բազում անգամ վարդապետք լինին մեզ, օգոյն պղտորութեան և դաւնաշունչ հոլմոցն սառնամանեաց 1։

ԱԵ. Երակացի

Ըստ աստուածային գրոց որ ասաց, թէ առաք լուսաւորս մեծամեծս ի նշանս, ի ժամանակս, յաւուրս և ի տարեկ. յոյժ պիտոյ են մարդկան նշանք որ լինին ի լուսաւորացք, եթէ որ ըստ կէտ սահմանին ոչ ելանիցէ օտարոտի քընուծեամբ. զի որ միտ եդեալ ընտրեացէ զգեղեցիկ փորձն նոցա, և ոչ խառնիցէ ի ներքս ամբարշտութիւն ազգի ազգի հնարագիտութեան, գտանեն ի նշանաց անտի, զի վասն խոնաւոյ ժամանակն ցուցանէ, բազում անգամ վարդապետք լինին մեզ օգոյն պղտորութեան և գաւնաշունչ սառնամանեաց։

1. Հայ Թարգմանութեան սյս կտորն գրեթէ բառ առ բառ կը համաձայնի ընտրքին հետ։

2. Այս տեղ Ս. Բարսեղի հրատարակութեան ընթերցումն ընտրեալացն է, « ազգի ազգի հնար օրտա, քիւն », ինչպէս նաև կ'հասարկութիւնն։

իսկ այն հատուածիկները (էջ 97, Արարատ) որ կը սկսին « Զի յերեկօրեայ (= յերեքօրեայ) ժամանակի, և այլն », և « Յորժամ շուրջ բազ ունիցի (լուսինն) յամպոց, և այլն », նոյնպէս, « Զի յորժամ ընդ արեգականն, և այլն », և « Յորժամ յամպոյ յամպ մտաւ նիւցէ, և այլն », որք ճշգիւ նոյնք են թէ ըստ իմաստից և թէ ըստ լեզուի Յաղագս ամպոց և նշանաց գրութեան մէջ գտնուած հատուածներուն, — որոնց վրայ հիմնել էր Յ. Բանաստեղծ իւր երկրորդ վաստը, — պիտի տեսնենք որ որոշոյն այլ փոխառութիւնք են ի վեցօրէից Ս. Բարսղի, եթէ ուզենք համեմատել վերնոյն զբրին (ձառ Զ. 115 իջին հետ) Տարակոյս չկայ թէ՛ երբ երկու Հեղինակք մի և նոյն աղբրէն փոխառութիւններ կ'ընեն, նոցա երկուքին մէջ կը տեսնուի նոյնութիւն լեզուի և նիւթոյ գրութեան: Այս բանն աւելի ևս յայնպիսի կը լինի, երբ ուշ դնենք՝ թէ Յաղագս ամպոց և նշանաց գրութեան Հեղինակն՝ տեղ տեղ աւելի Ս. Բարսղի Հետ՝ ճիշդ կը գուզենթանայ քան Շիրակացւոյն Հետ: — « Զի յորժամ ընդ ծագել արեգական » պարբերութեան մէջ կ'ըսէ Շիրակացին. « Եւ Հորմը ևս խառնառութիւն յռագեցին, և ամպն ևս քան զկա յառեցի, և այլն »: — Ամպոց և նշանաց Հեղինակն ունի. « Եւ ապա (ուղղելի ամպին) ևս քան զկա քաղմանայցեն, և աւրքն (Հորմը) խառնառել յառեցին, և այլն »: — Ս. Բարսղ. « Եւ Հորմը խառնառել ևս յառեցին, և ամպն ևս քան զկա քաղմացի. և այլն »: — Յաղագս ամպոց և նշանաց ունի (Արարատ, էջ 104, Կթ, 2102). « Յորժամ ընդ երկոյս կարորութիւն լինի յերկրին՝ զպարզ նշանակէ. և յորժամ ընդ առաւօտս՝ անձրեւս նշանակէ »: — Ս. Բարսղ. (ձառ Զ. 115). « Յորժամ ընդ և ընկա կարմարանայցեն երկինք՝ զպարզոյ յայտ առնեն, և յորժամ ընդ առաւօտս կարմրանան՝ զանձրեւի նշան ցուցանէ »: — Շիրակացին սակաւ մի այլազգ ունի այդ կտորը (էջ 56). « Յորժամ ի մուտս զլեռոյսն խանձիցէ զերկին կարմրացունելով՝ զառօրեայ պարզոյ յայտ առնէ. և յորժամ ելանիցէ ծառ գումին զառաջիման խանձելով՝ զառօրեայ անձրեւածունն նշանակելով »: — Գարձեայ Յաղագս ամպոց և նշանաց ունի (Կթ, 223). « Յորժամ աղեղն յամպս երկի՝ զաստիկ ամպոց (ուղղելի անձրեւաց) նշանակէ »: — Ս. Բարսղ. (էջ 115). « Յորժամ աղեղն յամպս երեւեսցի... զաստիկ անձրեւաց... յայտ առնէ »: — Շիրակացւոյն մէջ չիրցայ գտնել սորա համապատասխանող ձևը:

դ. Բայց Յօդուածագրին ամենէն աւելի քար զայրապիղծութեան եղբւն Շիրակացւոյն այն նշա-

նաւոր բացատրութիւնը, զոր արեգական վրայ խօսելու միջոց կ'ընէ (Հրատ. Պատկ. եր. 56). Մեկնաբանն նշանաց եղև ասալին բանիւղը: Լսենք թէ ինչպէս կը մեկնէ նա այդ խօսքերը (էջ 98). « Նշանների մեկ նութեան մի քանի օրինակներ բերելով Հիւրակացին՝ ընդհատում է իւր խօսքը, մատնացողց անելով ընթերցողին մի ուրիշ գրուածքի վրայ, որ էր Նշանաց մեկնաբանն (!)... այդ... նախընթաց էր Անանիայի Յաղագս երկինքի գրուածքին՝ ապա և քաղաքատութեամբ կարող էր կոչուիլ ասալին բանք »: — Արդ որչափ շէնքեր կը կառուցանէ նա այդ մէկ խօսքին վրայ, և — ուշ գրէք — մինչև անգամ փորձութիւն կ'անենայ այդ վերնագիրը « տալ ներքեւի հրատարակութեան, եթէ (իրեն) օգնութեան չհասնէր մի ուրիշ ձեռագիր »... O sancta simplicitas! Արդ թերթեցէք վերին անգամ մ'այլ, Գ. Բանաստեղծ, Ս. Բարսղի ձեռները և պիտի գտնէք (էջ 124), յետ « Եղիցին, ասէ, ի նշան » և այլն բառերուն, Շիրակացւոյ նոյն բացատրութիւնը. Մեկնաբանն (զոր օրինակն կ'ուղղէ մեկնաբանն) նշանացն եղև (կատարումն) ասալին յանդիւնք և ապա կրնայ էլիբով շարունակել համեմատութիւններ Հիւրակացւոյն ընդ Ս. Բարսղի, զորս իրարու Հետ նոյն պիտի գտնէք ըստ ամենայնի՝ մինչև ցնչանախէց անգամ:

Ըստ իս, այդ Յաղագս ամպոց և նշանաց գրութիւնը ուրիշ բան չէ՛, բայց եթէ հաւաքում մի այլևայլ օգային երևութից կամ գուշակութեանց, թարգմանեալ յայլևայլ գրոց. ինչպէս են՝ ձեռագրաց մէջ՝ Շիրակացւոյ ընծալուած երկասիրութեան վերջը գտնուածք, որոնք թարգմանութիւնք են Դանիէլ ասորի կոչուած մէկէ մի կամ յայլևայլ Հեղինակաց: Սոցա մէջ պէտք է դասել նաև Յովհաննէս Լիւզացի¹ (Խանդակ Ասծոց), որ ունի Յա-

1. Յովհաննէս Լիւզացի ծնեւ է ի Փիլադելփիա (Ասորի) Գրիգորի 490 թուականին: Նշել ժամանակը բնականաբար կամ յոյն մատենագրաց մէջ նշանաւոր ենթէն մին է սա և յառ զբնութիւններ ունի, յորոց ու մարկ կորսուած են. ինչպէս են. 1) Ներքու է Զարթիւր՝ որ էր պաշտպան էր, որուն այնչափ հանց անցաւ այդ հանց, որ կարողանայի սողին հատը մէկ մէկ ոսկի աղբիւն ձառաբանել: 2) Ներքու է Կոյրն Յուսիփիւն, և որ կարեւորագոյն է: 3) Պարթուրիւն տալիս զարթիւն զարթեալքն, որ նորէն արժանապատ Յուսիփիւն կայարարութեան ժամանակ, յետ Նշանաւոր պարտութեան Պերդոյի և վերջապէս յամին 535: Իսկ իրեն այն գրութիւնք որոնք ձեռքերին հասեր են՝ նեառեւ են. 1) Յաւաթա տալիս (թեր յաղծ). 2) Յաւաթա ինտիմիտիւն զուգարիտի և յիստիփիտի (թեր ձրքոն տից՝ Πομπαιον πολιτείας) 3) Յաւաթա Կաւաթ (թեր ժոօշիթեւոն), զոր ըստ գովեստիւնք կը մեկնէ

դագս նշանաց (περὶ διοσσημελων) գիրք մի, յորում իւրաքանչիւր ամսոց և օրերուն վրայ բաժներ է օգային կամ երկնից նշանները և գուլակութիւնները: Եթէ ուզէ մարդ համեմատել Յադագս ամպոց և նշանաց և

Շիրակացւոյ ընծայուած ուրիշ գրութիւնները վերոյիշեալ Յադագս նշանաց գրքին հետ, ապահով եմ՝ որ շատ տեղ իրարու յար և նման իմաստներ պիտի գտնէ:
Հ. Յովհ. Վ. Թորոսեան

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԻՏԱԼԻԱ

Վ Ե Ն Ե Տ Պ Վ

(Տես յէջ 12)

Շրջագայութիւնք. — Ճիւղեկկա. — Յիսուսեայք. — Յիսուսեանք.

ՄԵՆ օր կը տեսնեմ Տիարանոսի, Տիարորեանոսի, Պ. Վերոնացւոյ նկարները. սակայն դեռ չեմ սեզեր անոնց վրայ խօսիլ, կատարեալ և չափազանց ճոխ աշխարհ մ'է այն. մանաւանդ այս Տիարորեանոս տարօրինակ է, վենետկոյ մէջ միայն կարելի է նորա վրայ զադափար մ'առնուլ:

Սուր ամբօնն կ'երթեւեկէ դէպ ի Պարտիզի Տիրամօր եկեղեցին², տեսնելու համար իւր մեծամեծ նկարները, Ոսկեղէն հորթի երկրպագութիւնը, վերջին դատաւարանը: Եկեղեցին զոց է, նկարները վերացեր, փաթթեր, զետեղեր են՝ չես գիտեր ո՛ր. շէնքն երեսի վրայ թողուած կը թուի. կողմակի կործանած վանք մը կայ, որ տախտակաց մթերանոցի տեղ կը ծառայէ. դալար և խիտ խոտն կը ծլի կամարակապեւու եր-

27 ապրիլ.

կայնութեամբ: Ահաւասիկ իմ ամենամեծ տրանսլիւններէս մին վենետկոյ մէջ:

Գոնդալարն քաղաքին հիսօսային կողմէն շրջան մը կ'ընէ, և այս լուսոյ զառաւակայրին առջեւ կը մոռցուին ամենայն սրտանեղութիւնք և պարապ ելած յոյսերն: Չի ձանձրացուիր բնառ ծովէն, անասնան հօրիզոնէն, ցամաքային հեռաւոր փոքրիկ գօտիներէն՝ որք տարտամ դալարութեան մը ներքեւ վեր կը բարձրանան, ինչպէս նաեւ գրեթէ ամայի ժողովրդական աարօրինակ փողոցներէն՝ ուր կ'երեւան աննրու աղիւններն՝ ջրէն մաշուած, ուր խեցիներով պատուած ցիցերու սաորոտն այնպէս բարակցեր է՝ որ կը վախեն թէ արդ պիտի կտրուի: Սուրբ Յոր կ'երեւի, վերածնութեան դարու փոքրիկ եկեղեցի մ'է այս, արտաքուստ սպիտակ և անշուք, բաց ի իւր մէկ նրբազարդ և շքեղ դռնէն: Ներքը՝ կղզիկոս Պետլի յիշատակաբան մը՝ զարդն խնոցուած է. ճոխ բայց անարուեստ սեւա մարմարինէ սափորի մը վրայ ի ցոյց դրած է ննջած փոքրիկ հրեշտակ մը, գէր և առջոյ, կարծես փլանդրիական քերթիւնից ազգականն. աւելի վարը, կնքագիտական կենդանեաց անարուեստ շքե-

Թեոփիլակաոս և Յարգելին Ռեզա, որ և լատիներէն թարգմանեց զայն (յամին 753) պատ. անուամբ. «Li-bellus de tonitruis». (Corpus Scriptorum Hist. Byzant. ed. Bonnæ, 1837).

1. I Gesuati.

2. Chiesa della Madonna dell'Orto,